ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 41 - 42 (16237) ՇԱԲԱԹ, 24 ՄԱՅԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԵՆՔ, ՈՐ ԴԱՌՆԱՆՔ ԵՄ-Ի 29-ՐԴ ԱՆԴԱՄԸ»

Բրյուսել կատարած այցի շրջանակներում՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուի հետ:

Հանդիպմանն ընդգծվեց Եվրամիության եւ Վրաստանի միջեւ մոտ ժամանակներս ասոցիացման համաձայնագրի ստորագրման պատրաստակամությունը: «Եվրամիությունը կրկին անգամ ընդգծում է, որ հանդես է գալիս ասոցիացման համաձայնագրի ստորագրման եւ Վրաստանի եվրաինտեգրման պաշտպանությամբ: Այդ փաստաթղթի ձեւակերպումը նոր փուլ կբացի հոգուտ վրաց հասարակայնության բարօրությանը: Եվրամիությունը կշարունակի ակտիվորեն աջակցել Վրաստանում իրականացվող բարեփոխումների գործընթացին՝ մնալով այդ երկրի համար օգնության հիմնական դոնորներից մեկը»,- համատեղ մամլո ասուլիսում հայտարարեց Ժոզե Մանուել Բարոզուն:

Ի հաստատում վերոնշյալի, եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուն եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ստորագրեցին համընդգրկուն ինստիտուցիոնալ զար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՈՄԻՍԱՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 20-ից, պաշտոնական երկօրյա այցով, Թբիլիսիում էր գտնվում մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի Գերագույն կոմիսար Նավի Փիլեյին:

Այցի շրջանակներում՝ ՄԱԿ-ի ներկայացուցչի հետ հանդիպեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն: Բացի այդ, ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների հարցերով Գերագույն կոմիսարը նաեւ բանակցու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵՐՔ

ԱՂԵՏԱԼԻ ՍՈՂԱՆՔ ԴԱՐԻԱԼԻ ԿԻՐՃՈՒՄ

Մայիսի 17-ին Վրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտից տեղեկություն էր ստացվել, որ Գվելեթի-Դարիալ (Ներքին Լարս) ավտոճանապարհի միջնամասում՝ Թերեք գետի ափին տեղի է ունեցել 150 մետր երկարության, 60-70 մետր լայնության եւ 30-40 մետր բարձրության փլվածք:

Այն փակել է Ռուսաստանն ու Անդրկովկասը միացնող Ռազմավիրական ճանապարհը եւ Թերեք գետի հունը: Դարիալի կիրճում «Կազբեկ» (Վրաստան)-«Վերին Լարս» (Ռուսաստան) սահմանապահ անցակետի աշխատանքը դադարեցված է ինչպես վրացական, այնպես էլ ռուսական կողմից: Սողանքը վթարային իրավիճակ է առաջացրել «Հյուսիս-Հարավ» մայր գազատարում, որով ռուսական գազը տարանցմամբ փոխադրվում է Հայաստան: Վթարի արդյուն-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՈԲԵԼՅԱՆ

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԸ՝ 90 ՏԱՐԵԿԱՆ

20-րդ դարի լավագույն երգիչ, կոմպոզիտոր, բանաստեղծ, դերասան, Հայաստանի ազգային հերոս, Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանակիր, կենդանի լեգենդ Շառլ Ազնավուրը, մայիսի 22-ին դարձավ 90 տարեկան:



Հոբելյանի առթիվ մենք կապվեցինք շանսոնյեի հետ, որը գտնվում էր Բեռլինում, որտեղ անց էր կացվելու նրա հոբելյանական համերգը:

Մենք խմբագրության եւ թերթի ընթերցողների անունից շնորհավորեցինք հոբելյարին, մաղթեցինք առողջություն, նորանոր հաջողություններ ստեղծագործական կյանքում եւ հասարակական ու քաղաքական գործունեության մեջ:

«Անչափ երախտապարտ եմ շնորհավորանքի առթիվ: Երկար խոսել չեմ կարող, հիմա համեգն է սկսվելու, սակայն կցանկանայի, որ դուք «Վրաստանի» ընթերցողներին հայտնեիք հետեւյալը. վերջին անգամ Վրաստանում գտնվելու ժամանակ խոստացել էի իմ 90-ամյակը նշել Ախալցիխեում: Ցավոք, խոստումս կատարել չեմ կարող: Սակայն խոստանում եմ, որ հաջորդ, 95-ամյա հոբելյանս անպայման կնշեմ ձեր շրջապատում եւ իմ պապերի ծննդավայրում՝ Ախալցիխեում:

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

Ընթացիկ տարվա մայիսի 26-ին Վրաստանը նշում է պետական անկախության վերականգնման 96-րդ տարելիցը: Ավելի քան մեկդարյա ընդմիջումից հետո, 1918 թվականի մայիսյան այդ օրը Վրաստանը դարձավ անկախ պետություն, թեպետ անկախ պետականությանը պատմությունը չէր շնորհել երկար տարիների կյանք: Այդ երազանքի վերջնական իրականացման համար անհրաժեշտ էր անցնել 72 երկար ու ծիգ տարիներ, զգալ կորուստների ո ւպարտությունների ցավը: Եվ այսօր, պետական նոր անկախության 23-րդ տարում, նշելով անկախության վերականգնման 96-ամյա տարելիցի օրը, երկիրը հույսով, վստահությամբ ու համոզվածությամբ է նայում ապագային, վաղվա օրվան:

Տոնական միջոցառումները կանցկացվեն Թբիլիսիում եւ ինքնակառավարման 12 քաղաքներում:

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

Հայ ժողովրդի պատմությունը, իրականում լի է զարմանալի զուգադիպություններով, թեպետ յուրաքանչյուր զուգադիպության հիմքում դրված է լինում պատմական օրինաչափությունը:

Ըստ երեւույթին, վերուստ էր սահմանվել, որ դարեր առաջ պետական անկախությունը կորցրած երկրի պետականության վերականգնման օրը՝ մայիսի 28-ը, պսակվելու էր Սարդարապատի հերոսամարտով: Անկախության երեք տարիների ամեն օրը պսակվեց յուրատեսակ «սարդարապատներով»՝ փոքր ազգով կռվեցինք վիթխարի կայսրության դեմ՝ ազգ լինելու եւ ազգ մնալու իրավունքի համար: Եվ հաղթեցինք... այլ ճանապարհ չունեինք: Հաղթեցինք, սակայն հետո, ժամանակավորապես նահանջեցինք, որպեսզի յոթ տասնամյակ անց, անցնելով Սումգայիթ, Բաքու, ավերիչ երկրաշարժ, կրկին վերածնվենք դարաբաղյան կռիվներով: Եվ կրկին հաղթեցինք, քանի որ կրկին նահանջելու տեղ չունեինք, իրավունք չունեինք, որովհետեւ միայն այդ ձեւով ինքներս մեզ եւ ողջ աշխարհին ապացուցեցինք պատմական ազգ լինելու մեր օրինական իրավունքը:

Պատմական քմահաճույքներից բացի, բարեբախտաբար, կա նաեւ երկաթե օրինաչափություն, Հայաստանը դարձավ անկախ, որովհետեւ դա էր հայ ժողովրդի կամքն ու մեծ ցանկությունը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ԽՈՐԱՆՈՒՄ ԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Մայիսի 20-21-ին, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին նախարարության արտաքին հարաբերությունների վարչության պետ Սվետլանա Սահակյանը, Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, Հայաստանի պատմա-մշակութային գիտա-հետազոտական կենտրոնի փոխտնօրեն Հովհաննես Սանամյանը:

Վրաստան-Հայաստան սահմանագծում հայկական պատվիրակությանը դիմավորեց Վրաստանի մշակույթի նախարար Գուրամ Օդիշարիան:

Ապա Թբիլիսիում կայացավ երկու երկրների մշակույթի նախարարների հանդիպումը, որին ներկա էին վրացական կողմից մշակույթի փոխնախարարներ Բադրի Բագրատիոն-Գրուզինսկին եւ Մա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԵՆՔ, ՈՐ ԴԱՌՆԱՆՔ ԵՄ-Ի 29-ՐԴ ԱՆԴԱՄԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գացման ծրագրի շրջանակներում Վրաստանին ֆինանսական օգնություն հատկացնելու համաձայնագիրը: «Արեւելյան գործընկերության» նախագծով նախատեսված առաջնահերթությունների աջակցության նպատակով, Եվրամիությունը նախատեսում է Վրաստանին հատկացնել շուրջ 31 միլիոն եվրո:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ Վրաստանը հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի դառնա Եվրամիության 29-րդ անդամը:

«Հաջորդ ամսին, հունիսի 27-ին, մենք ստորագրելու ենք ԵՄ-ի հետ Վրաստանի ասոցիացման մասին համաձայնագիրը: Այդ համաձայնագիրը մեր հարաբերությունները կհասցնի որակապես նոր մակարդակի: Եթե կարճ ասենք, դա Վրաստանի եվրոպականացման գլխավոր պլանն է, որը երկրին կբերի լայն հնարավորություններ եւ շատ առավելություններ»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Անդրադառնալով ասոցիացման համաձայնագրի ստորագրման նախաշեմին երկրի էկոնոմիկայի զարգացման հարցերին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ այդ ոլորտում առաջընթացը նկատելի է: «Մենք նշանակալի հաջողությունների ենք հասել ազատ ու թափանցիկ տնտեսական միջավայրի ստեղծման հարցում եւ ձեռնամուխ ենք եղել տեղական եւ միջազգային գործարարների տնտեսական հնարավորությունների մեծացմանն ուղղված բարեփոխումներին: Բացի այդ, մենք արմատախիլ ենք արել կոռուպցիան: Գործարարության իրականացման դյուրության առումով Վրաստանն զբաղեցնում է երկրորդ տեղը: 2014 թվականի առաջին եռամսյակի տվյալներով, Վրաստանում տնտեսական աճը կազմել է 7,4 տոկոս»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Նրա խոսքերով, Վրաստանի տնտեսական հաջողություններն ընդունվել եւ խրախուսվել են միջազգային հանրության կողմից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՈՄԻՍԱՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյուններ վարեց Գերագույն դատարանի նախագահ Կոտե Կուբլաշվիլու, ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլու, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ Վրաստանում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Վրաստանի նախագահի եւ մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի Գերագույն կոմիսարի հանդիպմանը քննարկվեցին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Վրաստանի առաջընթացին առնչվող հարցեր: Առանձնակի ուշադրություն հատկացվեց բռնազավթված տարածքներում, ինչպես նաեւ դրանց երկայնքով ապրող մարդկանց իրավունքների փաստերին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ՄԻՆԻՆԳԻՏԻ 190 ԴԵՊՔ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ

Մայիսի 23-ի դրությամբ, Վրաստանում գրանցվել է մինինգիտի 190 դեպք: Հիվանդների 87 տոկոսը բուժումն անցնում է Թբիլիսիի Իաշվիլու անվան կլինիկայում, իսկ մյուսները Քութայիսիի եւ Բաթումիի բժշկական հաստատություններում: Այդ մասին հատուկ հրավիրված մամլո ասուլիսում հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն:

Նրա խոսքերով, ներկա փուլում Վրաստանում մինինգիտի համաճարակի սպառնալիք չկա: «Համաճարակի հստակ բնորոշումը, նախորդ տարվա համեմատությամբ, հիվանդության դեպքերի թվաքանակի կտրուկ աճն է: Սովորաբար տարեկան Վրաստանի մասշտաբով մինինգիտի մանրէով վարակվում է մոտ 150 մարդ եւ չորս տարին մեկ անգամ այդ թիվը կրկնապատկվում է: Հետեւաբար, այսօր ստեղծված իրավիճակը խուճապի ոչ մի հիմք չունի»,- հայտարարեց նախարարը:

Դավիթ Սերգեյենկոն, կրթության փոխնախարար Լիա Գիգաուրու եւ Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեի հետ ունեցած հանդիպումից հետո, հայտարարեց. «Խորհրդակցության արդյունքում առողջապահության նախարարությունը հանձնարարում է մայիսի 22-ից մինչեւ 26-ը դադարեցնել ուսումնական գործընթացը տարրական դասարաններում, մինչեւ վեցերորդ դասարանը ներառյալ, եւ դաստիարակչական գործընթացը՝ մանկապարտեզներում: Այդ օրերը կօգտագործվեն նշված հաստատությունների ուժեղացված սանիտարական մշակման համար»:

Նրա խոսքով, վերջին երկու շաբաթվա ընթացքում հաճախացել են էնտերովիրուսային մինինգիտով հիվանդանալու դեպքերը: Ինչպես պարզաբանել է նախարարը, այդ տիպի հիվանդության համար չի պահանջվում հատուկ ախտահանում կամ խիստ կարանտին, բայց, վերլուծելով ընթացիկ իրադրությունը, առողջապահության նախարարությունը հանձնարարական է մշակել:

Նախարարը նշեց, որ մայիսի 26-ին տեղի կունենա եւս մեկ հանդիպում, որի ընթացքում կգնահատվի իրադրությունը: Դրանից հետո կորոշվի՝ կարելի՞ է, արդյոք, ամբողջովին վերսկսել ուսումնական գործընթացը: Սերգեյենկոյի խոսքով, եթե ուսումնական գործընթացը չվերսկսվի, կրթության նախարարությունը կհոգա, որ այդ օրերն ապագայում փոխհատուցվեն:

Իր հերթին, հիվանդությունների վերահսկողության կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ դա համաճարակային պայթյուն է, լաբորատորիայի կողմից վավերացված էնտերոմանրէ, որի բնույթը ներկայումս հստակեցվում է: Նրա խոսքերով, նախականխիչ լավագույն միջոցն անձնական հիգիենայի նորմերի պահպանումն է:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱԺ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ԽՈՐԱՆՈՒՄ ԵՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նանա Բերիկաշվիլին, նախարարի խորհրդական Գիորգի Գեգեճկորին, նախարարի աշխատակազմի ղեկավար Լեւան Խարատիշվիլին, հուշարձանների պաշտպանության ազգային գործակալության տնօրեն Նիկոլոզ Անթիձեն, հայկական կողմից՝ Հայաստանի մշակույթի նախարարության պատվիրակության անդամներ:

Հանդիպմանը մասնակցեց նաեւ Վրաստանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Ափյանը:

Հանդիպմանը քննարկվել են մշակութային ոլորտում երկու երկրների համագործակցության զարգացման հետ կապված հարցեր: «Նախարարի հետ հանդիպմանը մենք հաշվետվություններ փոխանակեցինք: Համագործակցության առումով լուրջ առաջընթաց կա: Մենք երջանիկ ենք, որ այսօր, բացի պաշտոնական համագործակցությունից, ակտիվ համագործակցություն են ծավալել նաեւ հասարակական կազմակերպությունները»,- ասաց Հասմիկ Պողոսյանը: Հանդիպմանը կողմերը քննարկել են Վրաստանի մասնակցությունը՝ «Գյումրի՝ մշակութային համագործակցության մայրաքաղաք 2014» միջոցառմանը:

Այցի շրջանակներում՝ Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Վրաստանի պետական պատմության թանգարան, որտեղ դիտեց «Արդի արվեստը եւ թանգարանը» ցուցասրահը, որտեղ ներկայացված էին Վրաստանի, Հայաստանի, Գերմանիայի ու Ադրբեջանի ժամանակակից արվեստի գործերը:

Նույն օրը հյուրերն այցելեցին եւ ծաղիկներով զարդարեցին Սերգեյ Փարաջանովի հուշարձանը:

Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանն այցելեց նաեւ Վրաստանի թատրոնի, երաժշտության, կինոյի եւ պարարվեստի պետական թանգարան: Թանգարանում Հասմիկ Պողոսյանին ներկայացվեցին թանգարանի պահեստարաններում պահվող հայ նկարիչների բացառիկ գործերը: Հայաստանի մշակույթի նախարարին ներկայացվեցին նաեւ թանգարանում պահվող հայկական ձեռագրերը, 19-րդ դարի թատերական գովազդներն ու հայկական թատերախմբերի լուսանկարները:

Պաշտոնական այցի երկրորդ օրը Հասմիկ Պողոսյանը, Վրաստանի մշակութային ժառանգության պաշտպանության ազգային գործակալության տնօրեն Նիկոլոզ Անթիձեի եւ Վրաստանի մշակույթի փոխնախարար Բադրի Բագրատիոն-Գրիգինսկու ուղեկցությամբ, եղավ Թբիլիսիի Սուրբ Նշան եկեղեցում:

Լրագրողների հետ կարճատեւ զրույցի ժամանակ Հասմիկ Պողոսյանն ասաց, որ կողմերի առաջադրանքն է պահպանել մշակութային ժառանգություն հանդիսացող հուշարձանները՝ եվրոպական կոնվենցիայի շրջանակներում: Ինչ վերաբերում է վիճահարույց թեմաներին, Հասմիկ Պողոսյանն ասաց, որ նման հարցեր չեն դիտարկվում: Անդրադառնալով Հայաստանի տարածքում վրացական եկեղեցիների խնդրին, Հասմիկ Պողոսյանն ասաց, որ հուշարձանների պահպանման հետ կապված Հայաստանի դիրքորոշումը համընկնում է Վրաստանի դիրքորոշման հետ՝ Վրաստանում հայկական եկեղեցիների պահպանման առումով:

«Գործում է մասնագետների հայ-վրացական խումբ, որն ունի ընդամենը մեկ առաջադրանք՝ պահպանել հուշարձաններն այն պատմական տեսքով, որ ստացել ենք որպես ժառանգություն: Մենք հավատարիմ ենք մեր սկզբունքներին, եւ կարծում եմ՝ կշարունակենք համատեղ աշխատանքը նույն ձեւաչափի մեջ»,- հայտարարեց Հասմիկ Պողոսյանը:



ՈՒԿՐԱԻՆԱ

ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուկրաինայում նախագահական ընտրությունները տեղի կունենան մայիսի 25-ին եւ, ինչպես ապրիլի վերջին հայտարարել էին երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, կհամարվեն կայացած՝«անկախ ընտրական տեղամասերի եւ այն ընտրատարածքների քանակից, որտեղ անհնար է պարզել քվեարկության արդյունքները»:

ԿԸՀ-ը որպես նախագահության թեկնածուներ գրանցել է 21 անձի: Գրանցվածների թվում են Ուկրաինայի ԱԳ նախկին նախարար Պյոտր Պորոշենկոն, նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոն, ուրիշներ:

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄ Է ՖԵԴԵՐԱԼԻԶԱՑՄԱՆԸ

Ուկրաինացիների բացարձակ մեծամասնությունը՝ 73,4 տոկոսը, այն կարծիքին է, որ Ուկրաինան պետք է մնա ունիտար պետություն: Այդ մասին վկայում են «Ուկրաինան՝ նախագահական ընտրությունների նախօրեին, մայիս» համաուկրաինական սոցիոլոգիական հարցման արդյունքները:

Ուկրաիներենի՝ որպես միասնական պետական լեզվի կարգավիճակը պաշտպանում է ուկրաինացիների 38,2 տոկոսը:

Ռուսաց լեզվին պաշտոնականի կարգավիճակ տրամադրումը Ուկրաինայի առանձին տարածաշրջաններում պաշտպանում է բնակչության 27,3 տոկոսը: Դրա հետ մեկտեղ հարցման մասնակիցների 30,7 տոկոսն այն կարծիքին է, որ Ուկրաինայում՝ թե' ուկրաիներենը, թե' ռուսերենը պետք է լինեն պետական լեզուներ:

Ուկրաինացիների 73,4 տոկոսը պաշտպանում է Ուկրաինայի պետական կառուցվածքի ներկայիս ունիտար ձեւը: Երկրի ֆեդերալացման կողմնակիցները կազմում են հարցվածների 15,8 տոկոսը:

ՍԵՐԲԻԱ

ԶՈՀԵՐ՝ ՋՐՀԵՂԵՂԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Սերբիայում հեղեղումների պատճառով, ընդհանուր առմամբ տարահանվել է ավելի քան 25 հազար մարդ: Նրանցից 7,8 հազարն Օբրենովաց քաղաքի բնակիչներ են, որտեղ առավել վտանգավոր իրադրություն է ստեղծվել: Ընդամենը երկրի տարածքում ջրածածկ է եղել 2 260 օբյեկտ, խորտակման սպառնալիքի տակ են եւս 1 763-ը: Առայժմ առանց էլեկտրականության է մնում 26 հազար տնային տնտեսություն:

Շաբացի քաղաքային վարչությունը հայտնել է երկու, իսկ Օբրենովաց քաղաքում 12 զոհվածների մասին: Ավելի վաղ հաղորդվել էր հինգ զոհերի մասին: Այսպիսով, երկրում նրանց ընդհանուր թիվը հասել է 19-ի: Իշխանությունները ելնում են այն բանից, որ զոհվածների իրական թվաքանակն էապես ավելի մեծ է:

ԹՈՒՐՔԻԱ

ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Ստամբուլում Սոմայի ածխահանքի աղետի հետ կապված բողոքի ակցիայի ժամանակ ոստիկանության եւ ցուցարարների միջեւ տեղի ունեցած բախումների ընթացքում նվազագույնը մեկ ցուցարար է զոհվել, տասնյակ ցուցարարներ վիրավորվել են:

Ցուցարարները, որոնք Սոմայի աղետի համար մեղավոր են համարում թուրքական կառավարությանը, այրել են մի քանի ավտոմեքենա, դրանց թվում նաեւ ոստիկանական մեքենաներ են եղել:

Հիշեցնենք, որ Թուրքիայի Մանիսայի նահանգի Սոմա քաղաքի ածխահանքում մայիսի 13-ի գիշերը տեղի ունեցած պայթյունի եւ ծագած հրդեհի ու փլուզումների պատճառով զոհվել են 301 հանքափորներ: Հանքի աղետի հետ կապված՝ Թուրքիայի բազմաթիվ քաղաքներում բողոքի ցույցեր են անցկացվել, որոնց մասնակիցները պահանջել են կառավարության հրաժարականը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՍՅՈՒԺԵՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ազգային փոքրամասնությունների տեղեկատվական մակարդակի բարձրացման նպատակով, Հանրային հեռուստատեսության եթերում կհեռարձակվեն հատուկ սյուժեներ:

Վրաստանի եվրոպական ընտրության, եվրաինտեգրման գործընթացի եւ ասոցիացման մասին համաձայնագրի վերաբերյալ նվազ տեղեկատվության վերացման նպատակով, երկրի նախագահի աշխատակազմի աջակցությամբ սյուժեները կպատրաստվեն հինգ լեզուներով: Վերոնշյալ որոշումն ընդունվեց ազգային փոքրամասնության հարցերով նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդիի եւ Հանրային հեռուստատեսության գլխավոր տնօրեն Գիորգի Բարաթաշվիլու հանդիպմանը: Ինչպես հայտարարեց Շամանիդին, ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունները առանձնակի ուշադրություն են դարձնում այդ հարցին: «Նվազ տեղեկատվություն է նկատվում առանձնապես այն տարածաշրջաններում, որտեղ հոծաբնակ են ապրում ազգային փոքրամասնությունները: Այդ բացթողման վերացման համար Վրաստանի նախագահի աշխատակազմի աջակցությամբ Հանրային հեռուստատեսությունը եւ երկխոսության ու զարգացման հիմնադրամը կպատրաստեն հատուկ սյուժեներ, որոնք կառնչվեն համաեվրոպական արժեքներին, ասոցիացման համաձայնագրի կարեւորությանը եւ նրան, թե կոնկրետ ռեգիոնին ինչ օգնություն կարող է ներկայացնել համաձայնագրի ստորագրումը»,- նշեց Շամանիդին:

Իր հերթին՝ Գիորգի Բարաթաշվիլին հայտարարեց, որ սյուժեները եթեր կարծարծվեն հեռուստատեսության երկրորդ ալիքով, շաբաթական երեք անգամ: Բարաթաշվիլու տեղեկատվությամբ, սյուժեները կպատրաստվեն հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, օսերեն եւ աբխազերեն:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ՍԿՍՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՕՆԼԱՅՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Մայիսի 20-ին սկսվեց առաջին դասարանցիների օնլայն գրանցումը: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության նախարարությունը, այն կշարունակվի մինչեւ հունիսի 20-ը:

Գրանցումը կիրականացվի Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության www.mes.gov.ge եւ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի www.registration.emis.ge կայքերով, գրանցման հատուկ ձեւաչափի օգնությամբ:

Գրանցումը կատարում են երեխայի ծնողները: Գրանցում են նրա անուն-ազգանունը, անձնական համարը, ծննդյան ամսաթիվը, ծնողի անձնական համարը, հեռախոսահամարը, որով հակիրճ ուղերձ է առաքվելու գրանցման կատարման վերաբերյալ:

Համակարգը գրանցում է միայն այն երեխաներին, ում վեց տարին կլրանա մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մայիսի 21-ին վրաց լեզվի եւ գրականության քննությամբ Վրաստանի հանրային դպրոցներում մեկնարկեցին ավարտական քննությունները:

Ինչպես տեղեկացրել է քննությունների ազգային կենտրոնը, 12-րդ դասարանի աշակերտները դեռեւս անցյալ տարվա հոկտեմբերին հանձնել են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության եւ աշխարհագրության առարկայի քննությունները: Այն աշակերտները, ովքեր հոկտեմբերին չկարողացան հանձնել վերոնշյալ քննությունները, այն կարող են հանձնել հիմա՝ մյուս չորս առարկաների հետ միասին»,- ասված է կենտրոնի հայտարարության մեջ:

Տարեվերջին 11-րդ դասարանի աշակերտները հանձնում են այն առարկաների քննությունները, որոնց ուսուցումն ավարտում են:

ԲԻԶՆԵՍ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻԶՆԵՍԻ ՄԻՋԵՎ ՄԻՋՆՈՐԴԸ ՄԻԱՅՆ ԲԻԶՆԵՍ ՕՄԲՈՒԴՍՄԵՆՆ Է»

Մայիսի 23-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ երկրի գործարար շրջանների ներկայացուցիչների հետ:

Իր խոսքում, վարչապետը հպարտությամբ նշեց, որ գործարարության իրականացման դյուրության տեսանկյունից Վրաստանն աշխարհում զբաղեցնում է 8-րդ տեղը: Վարչապետը նշեց, որ Վրաստանն առաջատար է ոչ միայն այդ տեսանկյունից, այլեւ նրանով, որ վերացել է բիզնեսի վրա ճնշում գործադրելու հավանականությունը: Վարչապետի հայտարարությամբ, ինքն է նրա երաշխիքը, որ ոչ ոք չի կարողանա ճնշում գործադրել բիզնեսի վրա: «Մենք ներդրել ենք բիզնեսի հետ հաղորդակցության հիանալի պրակտիկա, ինչը մեզ հնարավորություն է տալիս բացահայտորեն ներկայացնել դիտողություններն ու առաջարկությունները:

Անդրադառնալով կառավարություն-բիզնես հարաբերություններին, վարչապետն առանձնակի ընդգծեց, որ այդ գործի միջնորդը միայն բիզնես օմբուդսմենն է: «Ցանկանում եմ ուժեղացնել Վրաստանում օմբուդսմենի ինստիտուտը, քանզի գտնում եմ, որ այն ամենաարդյունավետ հաղորդակցության մեխանիզմն է, որը չի առաջացնում երկմտություն եւ վերացնում է լարվածությունը: Դրանով իսկ ցանկանում եմ վերացնել շահարկումները այն մասին, թե ով է իրական միջնորդը կառավարություն-բիզնես հարաբերություններում: Անհրաժեշտության դեպքում դուք գիտեք, թե, ում եք դիմելու»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՉՀԱՐԿԱԴՐՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ Է

Ներկա դրությամբ, շուրջ 445 հազար ֆիզիկական անձ լրացրել է Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հռչակագրի հատուկ ձեւաթուղթը, չհարկադրվող նվազագույնի վերադարձման ընթացակարգի անցկացման համար:

Նրանց մի մասն արդեն ստացել է համապատասխան գումարը, իսկ մյուսներն այն կստանան օրենքով սահմանված ժամկետներում:

Ինչպես տեղեկացրին Վրաստանի ֆինանսների նախարարությունից, այսօրվա դրությամբ, վերադարձվել է 72 միլիոն 721 412 լարի:

Նշենք, որ վերոնշյալ գործընթացն սկսվել է ընթացիկ տարվա ապրիլի 1-ից: Քաղաքացիներին է վերադարձվում չհարկադրվող նվազագույնի տեսքով 360 լարի: Այդ գումարը տրվում է այն ֆիզիկական անձանց, ում 2013 թվականի աշխատավարձի ընդհանուր գումարը չի գերազանցել 2000 լարին: Չհարկադրվող նվազագույնի ստացման համար դիմորդները պետք է լրացնեն Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պաշտոնական www.rs.ge կայքէջում զետեղված ձեւաթուղթը, գրանցելով միայն անձնական համարն ու բանկային տվյալները:

Ձեւաթուղթը լրացնելու համար քաղաքացիները կարող են դիմել «Հանրապետություն», «Պրիվատբանկ», «TBC» բանկ, «Սաքարթվելոս բանկի», «Լիբերթի բանկի», «Բազիսբանկի», «Քարթու բանկի», «Կորստանդարտ բանկի», «Կոնստանտա բանկի», «Ֆինկա բանկ Վրաստան» բանկերին: Հայցը լրացնելուց առավելագույնս երեք ամսվա ընթացքում քաղաքացիներին կվերադարձվի չհարկադրվող նվազագույնի գումարը:

Նշենք, որ չհարկադրվող նվազագույնի վերադարձմամբ հանդես եկավ Վրաստանի կառավարությունը: Այն առանձնակի արտացոլվեց երկրի 2014 թվականի պետական բյուջեում, որտեղ առանձնացվեց շուրջ 600 հազար ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին նյութական օգնություն ցուցաբերելու գումարը:



ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՑ

Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի հումանիտար ֆակուլտետների լավագույն ուսանողները, Վրաստանի նախագահից այս տարի կստանան կրթաթոշակներ: Այդ մասին Վրաստանի նախագահը հայտարարեց մայիսի 22-ին երկրի առաջին բուհի եւ նախագահի աշխատակազմի միջեւ համագործակցության հուշագրի ստորագրումից հետո: Դրամական նման խրախուսումը կարող են ստանալ միայն լավագույն ուսանողները: Նրանց ընտրության գլխավոր չափորոշիչներն են գերազանց ուսուցումը, գիտական հրապարակումների առկայությունը, տարբեր մակարդակների գիտաժողովներին մասնակցությունը եւ բուհի հասարակական կյանքում ակտիվ ներգրավումը:

Ինչպես հայտարարեց նախագահը, տաղանդավոր երիտասարդների աջակցությունը պետության ղեկավարի աշխատակազմի գլխավոր առաջնահերթություններից է: Նախագահական կրթաթոշակը կրում է Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի անունը:

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 22-ին Թբիլիսի ժամանեց Վենետիկի պատվիրակությունը: Հանձնաժողովի անդամները հանդիպում ունեցան Վրաստանի սահմանադրական պետական հանձնաժողովի անդամների, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ: Սահմանադրական հանձնաժողովի անդամների եւ դրա նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ հանդիպումից հետո՝ Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Թոմաս Մարկերտը հայտարարեց, որ ներկայումս քննարկման փուլում են գտնվում սահմանադրական հանձնաժողովի առաջարկությունները:

Ինչպես նշեց Վրաստանի սահմանադրական հանձնաժողովի քարտուղար Գիորգի Կվերենչխիլաձեն, Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցությունն է՛լ ավելի կակտիվանա եւ սահմանադրական փոփոխությունները կընդունեն օրինանախագծի բնույթ եւ կձեւակերպվեն որպես նորմատիվային փաստաթուղթ:

2017-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳԱԶԻՖԻԿԱՑՈՒՄԸ ԿԱՎԱՐՏՎԻ

Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեի հայտարարությամբ, 2017 թվականի համար Վրաստանում գազիֆիկացման գործընթացը կավարտվի: «Մեր կառավարության առաջնահերթություններից մեկը լեռնային տարածաշրջանների վերածնունդն էր: Բարձրալեռ շրջաններից երիտասարդների արտագաղթը կապված էր կենսական ծանր պայմանների հետ: Երբ լեռներում կստեղծվի աշխատանքի եւ հանգստի համար անհրաժեշտ ենթակառույցը, կլինեն կենսական համապատասխան պայմաններ, մարդիկ կվերադառնան հարազատ վայրեր: Մենք ավարտեցինք այդ տարածաշրջանների էլեկտրիֆիկացումը եւ ձեռնամուխ եղանք գազիֆիկացմանը: Այն 2017 թվականի համար Վրաստանի ողջ մասշտաբով կավարտվի»,- հայտարարեց Կախի Կալաձեն:

ՈՐՈՇ ՍԻԳԱՐԵՏՆԵՐ ԹԱՆԿԱՑԵԼ ԵՆ

Առանձին տեսակի սիգարետներ թանկացել են: Առեւտրական կետերում դրանց գները ավելացել է 20 թեթրիով, մասնավորապես, 20 թեթրիով թանկացել են "L&M", "Chesterfield", "Muratti" ,"Parliament" , "Marlboro" տեսակի սիգարետները: Ինչպես հայտնեցին առեւտրական կետերում, վերոնշյալ սիգարետների գինը բարձրացրել է "Philip Morris" ընկերությունը: Նրանց տեղեկատվությամբ մյուս սիգարետների գները մնացել են նույնը:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԵՐԴՐՎՈՒՄ Է «ԱՐՏԱԴՐԻՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Մայիսի 19-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ, անցկացվեց «Արտադրիր Վրաստանում» կառավարական նոր ծրագրի շնորհանդեսը:

Թբիլիսիի «Էքսպո Ջորջիա» ցուցասրահում անցկացված ցուցահանդեսին ներկա էին Վրաստանի կառավարության անդամներ, գործարար շրջանների ներկայացուցիչներ:

Ելույթ ունենալով ծրագրի շնորհանդեսին, Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ գործադիր իշխանության կողմից մշակված ծրագրի բյուջեն կկազմի 46 միլիոն լարի, որից 30 միլիոնը նախատեսված է գյուղատնտեսական մթերքների արտադրության եւ վերամշակման, իսկ 16 միլիոնը՝ արդյունաբերական արտադրանքի թողարկման համար: Վարչապետի հավաստմամբ, ծրագրի գլխավոր նպատակն է խթանել տեղական արտադրությունը:

«Արտադրիր Վրաստանում» ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչից՝ ֆինանսների մատչելիություն, ենթակառույցների մատչելիություն եւ խորհրդատվական սպասարկում:

Ծրագրի շրջանակներում՝ աջակցություն կցուցաբերվի արտադրական այն ճյուղերին, որոնք ուղղված են կոնկրետ արտադրանքի թողարկմանը: Արտադրություններն ընտրված են հետեւյալ չափորոշիչներով՝ արտահանման ծավալ ու արտադրական տեղական ներուժ: Առավել կոնկրետ ճյուղային ծրագրերը հանդիսանում են թղթի եւ ստվարաթղթի, շինանյութերի, տեքստիլ, քիմիական արտադրանքի, փայտամշակման, էլեկտրասարքերի, մեքենաշինության, դեղագործության, պողպատի պատրաստի արտադրանքի, ռետինե եւ պլաստմասսե արտադրանքի արտադրությունը:

Առաջնահերթային է գյուղատնտեսությունը, այդ թվում՝ բանջարագործությունն ու այգեգործությունը, առանձնակի ուշադրություն կհատկացվի անասնապահական ֆերմաներին, թռչնաֆաբրիկաներին, կաշվի վերամշակմանը, դափնու տերեւի, ծխախոտի, թեյի, ընկույզի արտադրությանը, բարձր տեխնոլոգիական ջերմոցային տնտեսությունների զարգացմանը, մրգերի, հատապտղի, բանջարեղենի եւ ցիտրուսների վերամշակմանը:

Վարչապետի խոսքերով, վերոնշյալ ծրագիրը գործարարներին շահավետ պայմաններ է առաջադրում: «Այս տարին հայտարարվել է տեղական արտադրության տարի, եւ մենք ուշադրությունը կենտրոնացրել ենք տեղական արտադրության զարգացման վրա: Սա բավականին իրատեսական, լավատեսական ու հեռանկարային նախագիծ է: Մենք գործարարությանն առաջարկում ենք արտոնյալ պայմաններ, եւ ձեռներեցները, վարկերի ստացման դեպքում, առանձին պայմաններով մուծելու են ընդամենը մեկ տոկոսը: Ձեռներեցներին մեր երկրի մասին միասին հոգալու կոչ ենք անում: Ես հավատում եմ այս նախագծին»,- շնորհանդեսին հայտարարեց վարչապետը:

Իր հերթին, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ «Արտադրիր Վրաստանում» ծրագիրը կկիրարկվի 2014 թվականի հունիսի 1-ից: Նրա խոսքերով, ծրագրի մասնակիցներին գույքը կփոխանցվի խորհրդանշական գնով եւ այդ նպատակով, որպես անշարժ գույք, Թբիլիսիում եւ տարածաշրջաններում նախապատրաստվել է շուրջ 100 օբյեկտ:

«Վերոնշյալ գույքը ձեռնարկատերերին կհանձնվի խորհրդանշական գնով՝ 1 լարիով, այն հաշվով, որպեսզի նրանք հիմնեն նոր արտադրություններ: Խոսքը վերաբերում է նրան, որ քաղաքի պայմաններում ներդրումային պարտավորությունները կատարվում են վեցակի, իսկ տարածաշրջաններում՝ քառակի չափով»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Էկոնոմիկայի նախարարի խոսքերով, տարեկան փայաբաժնով ֆինանսական աջակցությունը պետության կողմից կկազմի 10 տոկոս:

ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Մայիսի 16-ի երեկոյան ավարտվեց ինքնակառավարման քաղաքների, քաղաքապետերի, մունիցիպալային վարչությունների ղեկավարների թեկնածուների գրանցումը, ինչպես նաեւ սակրեբուլոների պատգամավորների թեկնածուների կուսակցական ու մեծամասնական թեկնածուների ցուցակների ընդունումը:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամլո խոսնակ Եկատերինե Ազարաշվիլին:

Տեղական ինքնակառավարման ընտրությունները կանցկացվեն հունիսի 15-ին: Անմիջական քվեարկությամբ կընտրվեն տեղական ինքնակառավարման սակրեբուլոյի պատգամավորները, մունիցիպալիտետների վարչությունների նախագահն ու ինքնակառավարման քաղաքների քաղաքապետերը: ԿԸՀ-ի տվյալներով, մունիցիպալային ընտրությունների մասնակցության հայտ են ներկայացրել 34 կուսակցություններ եւ միավորումներ, որոնցից գրանցվել են 22 կուսակցություններն ու ընտրական չորս դաշինքները:

Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների, ինքնակառավարվող քաղաքների քաղաքապետերի եւ տեղական վարչակազմերի ղեկավարների ընտրությունները տեղի կունենան հունիսի 15-ին: Ընտրությունները կանցկացվեն խառը, համամասնական-մեծամասնական համակարգով:

Քվեարկության արդյունքներով կընտրվի 71 տեղական խորհուրդ (Սակրեբուլո), որոնցում կընդգրկվի 2088 մարդ: Նաեւ ուղղակի ընտրությունների ճանապարհով կընտրվեն 12 ինքնակառավարվող քաղաքների քաղաքապետեր եւ տեղական վարչակազմերի 59 ղեկավարներ:

Տեղական ընտրություններին կմասնակցի չորս դաշինք՝ «Վրացական երազանքը» (Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան. Պահպանողական կուսակցություն, Արդյունաբերողներ, Հանրապետական կուսակցություն, Ազատ դեմոկրատներ, Ազգային համաժողով). «Ազգային միասնական շարժումը» (Ազգային շարժում եւ Վրաստանի Քրիստոնեա-պահպանողական կուսակցություն), «Ոչ խորհրդարանական ընդդիմությունը» («Նոր աջեր» ու «Ազատ Վրաստան») եւ «Ժողովրդի ինքնակառավարումը» («Հանուն արդար Վրաստանի» եւ «Եվրոպական դեմոկրատներ»):

Ընտրադաշինքներից դուրս ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ շարժումների թվում են «Կանաչների» կուսակցությունը, «Վրացական կուսակցությունը», Վրաստանի լեյբորիստական կուսակցությունը, Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը, Նինո Բուրջանաձե-Միասնական ընդդիմությունը, Ժողովրդական շարժումը, Ազգային-ժողովրդավարական կուսակցությունը, Սալոմե Զուրաբիշվիլի-Վրաստանի ուղին, Ժողովրդական կուսակցությունը եւ ուրիշներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որպես Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուներ է գրանցել այն բոլոր 14 քաղաքացիներին, ովքեր համապատասխան հայտեր են ներկայացրել հունիսի 15-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու համար:

Նշենք, որ քվեարկության ընթացքում թեկնածուն պետք է ստանա ընտրողների ձայների 50 տոկոսից ավելին, որպեսզի հաղթի առաջին փուլում: Թեկնածուներն իրավունք ունեն ընտրություններին մասնակցելուց հրաժարվել՝ մինչեւ հունիսի 5-ը: Եթե այդ որոշումն ընդունվի ավելի ուշ, ապա թեկնածուի անունն ընտրությունների օրը կմնա քվեաթերթիկներում:

Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնի թեկնածուների թվում են տարածաշրջանների զարգացման եւ ենթակառուցվածքի հարցերով նոր կառավարության նախկին նախարար Դավիթ Նարմանիան, որն առաջադրվել է «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի կողմից, «Միասնական ազգային շարժումից» թեկնածու Նիկա Մելիան, որը ներկայում Հին Թբիլիսի վարչական շրջանի ղեկավարն է, իսկ Սաակաշվիլու կառավարության օրոք ղեկավարում էր Ազգային գործադիր բյուրոն, «Նինո Բուրջանաձե-Միասնական ընդդիմություն» կոալիցիայից թեկնածու Դմիտրի Լորթքիփանիձեն, «Ոչ խորհրդարանական ընդդիմություն» կոալիցիայից («Նոր աջեր» եւ «Ազատ Վրաստան») թեկնածու Կախա Կուկավան, «Կանաչների» կուսակցության առաջնորդ պատգամավոր Գիորգի Գաչեչիլաձեն, որը 2014 թվականի փետրվարին լքեց «Վրացական երազանք»-ի խորհրդարանական մեծամասնությունը, «Լեյբորիստական կուսակցությունից» թեկնածու, դերասանուհի Ասմաթի Տղաբլաձեն:

Թեկնածուների թվում են նաեւ «Օբյեկտիվ» մեդիա-միության ղեկավար Իրմա Ինաշվիլին, որի թեկնածությունը առաջադրվել է «Վրաստանի հայրենասերների ալյանսի» կողմից, «Վրաստանի աշխատավորների խորհրդի» թեկնածու, քաղաքագետ եւ հասարակական գործիչ Ռոին Լիպարտելիանին, Սալոմե Զուրաբիշվիլու՝ «Վրաստանի ուղին» կուսակցության թեկնածու, նկարիչ Թեյմուրազ Մուրվանիձեն, «Բարեփոխիչներ» կուսակցության ներկայացուցիչ Իրակլի Ղլոնտին, «Ինքնակառավարումը ժողովրդի համար» ընտրական դաշինքի թեկնածու Սերգո Ջավախաձեն (նա 2013-ի նախագահական ընտրություններին հավաքեց ձայների 0,13 տոկոսը), «Մերաբ Կոստավայի» ընկերության թեկնածու Գիորգի Լիլուաշվիլին (նախագահական ընտրություններին նա արժանացավ ընտրողների 0,12 տոկոսի աջակցությանը), «Ժողովրդի ձայն» միության ներկայացուցիչ Միխեիլ Սալուաշվիլին (նախագահական ընտրություններին հավաքեց ընտրողների ձայների 0,08 տոկոսը), «Ապագա Վրաստանի համար» կուսակցության թեկնածու Գիորգի Լաղիձեն (2010 թվականի Թբիլիսիի քաղաքապետի ընտրություններին հավաքեց ձայների 0,14 տոկոսը):

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՏԱՐԵՐՔ

ԱՂԵՏԱԼԻ ՍՈՂԱՆՔ ԴԱՐԻԱԼԻ ԿԻՐՃՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քում գազամատակարարումը դեպի Հայաստան դադարեցվել էր (նշենք, որ երեկ, մայիսի 23-ի, ժամը 14:07-ին Հայաստանի գազամատակարարումը վերականգնվեց): Նախնական տվյալներով, հողազանգվածի տակ ավտոմեքենաներ են մնացել: Վրացական ՁԼՄ-ների տեղեկություններով՝ Դարիալյան կիրճի սողանքների տակ են հայտնվել ՀԷԿ-ի կառուցմանը մասնակցող աշխատակիցներ, սակայն զոհերի եւ վիրավորների մասին պաշտոնական տեղեկատվություն դեռես չկա:

Մայիսի 18-ին տարերային աղետի վայր ժամանեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, ՆԳ նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն, պաշտոնական այլ անձինք: Տեղում Վրաստանի վարչապետի նախագահությամբ անցկացվեց Անվտանգության եւ ճգնաժամերի կառավարման խորհրդի նիստ:

Վրաստանի Անվտանգության եւ ճգնաժամերի կառավարման խորհուրդը հայտարարել է, որ Վրաստանի Դարիալի կիրճում տեղի ունեցած սողանքից հետո չգտնված է համարվում յոթ մարդ:

«Ժայռի բեկորների տակ են հայտնվել բեռնատար ավտոմեքենաներ: Բացի դրանից, սողանքի պահին թունելում, որտեղ տեղի էին ունենում շինարարական աշխատանքներ, նույնպես փլվածքների տակ է մնացել մի քանի անձ»,- ասված է Խորհրդի հայտարարության մեջ:

Մաքրման աշխատանքներում, որոնք համակարգում է Վրաստանի ենթակառուցվածքի եւ տարածաշրջանային զարգացման նախարարությունը, ներգրավված է մինչեւ 20 միավոր ծանր տեխնիկա:

Ինչպես հայտարարեց Վրաստանի ՆԳ նախարարը, պարզվել է Դարիալի կիրճում կորած յոթ անձանց ինքնությունը. նրանք Ուկրաինայի, Թուրքիայի եւ Վրաստանի քաղաքացիներ են:

Վրաստանի ՆԳ նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի հետ: Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը պատրաստակամություն է հայտնել ամենայն աջակցություն ցուցաբերել Վրաստանի գործընկերներին՝ փլվածքի հատվածում տարվող աշխատանքներին: Ալեքսանդր Ճիկաիձեն սրտացավության եւ պատրաստակամության համար շնորհակալություն է հայտնել Արմեն Երիցյանին ու նշել, որ դեռեւս ճշգրտելու բազմաթիվ հարցեր կան, եւ եթե կարիք զգացվի՝ աջակցության համար անպայման կդիմեն հայ գործընկերներին:

Վրացական կողմին օգնելու պատրաստակամություն է հայտնել նաեւ Ռուսաստանի Դաշնությունը: Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին շնորհակալություն է հայտնել Ռուսաստանի կառավարությանը՝ Դարիալի կիրճում տարերային աղետի հետեւանքների վերացման գործում օգնություն ցուցաբերելու պատրաստակամության համար:

«Մենք արդեն երրորդ օրն է՝ պայքարում ենք Դարիալի կիրճում տեղի ունեցած տարերային աղետի դեմ: Ցավոք, սողանքի հետեւանքով մահացել է մեկ մարդ, կորած են համարվում 7-ը: Չնայած այն բանին, որ փրկարար ծառայության ներկայացուցիչներն օպերատիվ օգնություն են ցույց տվել Ուկրաինայի քաղաքացուն, եւ նա տեղափոխվել էր Վրաստանի լավագույն կլինիկաներից մեկը, նրա կյանքը փրկել չհաջողվեց: Վրաստանի կառավարությունն անկեղծ ցավակցություն է հայտնում զոհվածի ընտանիքին:

Վրացական պետության անունից ցանկանում եմ ռուսական կողմին մեծ շնորհակալություն հայտնել մեզ հետ համագործակցելու պատրաստակամության համար: Ստեղծված բարդ իրավիճակում նրանք օպերատիվ կերպով մեզ տեխնիկա են առաջարկել տարերային աղետի հետեւանքները հաղթահարելու համար»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Ավելացնենք, որ Վրաստանի տարածքում՝ Գվելեթի-Դարիալ (Ներքին Լարս) ավտոճանապարհի միջնամասում՝ Թերեք գետի ափին մայիսի 17-ին տեղի ունեցած փլվածքի հետեւանքով բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար դեռեւս շարունակում է փակ մնալ Լարս ավտոճանապարհը: Փրկարարները պետք է մաքրեն շուրջ 1 միլիոն խորանարդ մետր ցեխ: Մայրուղու մաքրումը, մասնագետների տվյալներով, կշարունակվի առնվազն 1-1,5 ամիս: Այդ ամբողջ ժամանակ Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ սահմանը Վերին Լարս անցակետում փակ կլինի: Այս ուղղությամբ շրջանցիկ ճանապարհ բացելու տեղ չկա:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ